



Համարը
Տիպը Համաձայնագիր
Սկզբնաղբյուրը ՀՀԱԳՆՊՏ 2017.07.26/1(38)
Ընդունող մարմինը Հայաստանի Հանրապետություն
Ստորագրող մարմինը
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 03.03.2017

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Աշգաբաղ
Ընդունման ամսաթիվը 05.12.2012
Ստորագրման ամսաթիվը 05.12.2012
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հ Ա Մ Ա Զ

Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ ինտեգրված արժույթային շուկայի կազմակերպման բնագավառում համագործակցության մասին

Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունները, այսուհետ՝ Կողմեր, ընդունելով Կողմերի ինտեգրված արժույթային շուկայի ստեղծումը որպես գերակա խնդիր, նկատի առնելով 2003 թվականի ապրիլի 25-ի՝ ԱՊՀ Կառավարությունների ղեկավարների խորհրդի որոշմամբ հաստատված՝ ԱՊՀ մասնակից պետությունների ինտեգրված արժույթային շուկայի կառուցման Կազմակերպական հիմքերն ու սկզբունքները,

ելնելով ԱՊՀ մասնակից պետությունների ինտեգրված արժույթային շուկայում արտարժույթով փոխարկման գործարքների իրականացման գործում Կողմերի ռեզիդենտ բանկերի իրավահավասար և փոխշահավետ մասնակցության համար պայմանների ստեղծման անհրաժեշտությունից, համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրում կիրառվող եզրույթները նշանակում են.

ինտեգրված արժույթային շուկա – Կողմերի՝ գործունեության և պետական կարգավորման ընդհանուր սկզբունքներով միավորված ներքին արժույթային շուկաների ամբողջություն,

ռեզիդենտ բանկ- իրավաբանական անձ կամ այլ իրավական կազմավորում, որն իր պետության իրավասու մարմնի հատուկ թույլտվության (լիցենզիայի կամ այլ հիմքի) հիման վրա իրավունք ունի իրականացնելու համապատասխան Կողմի ազգային օրենսդրությամբ նախատեսված բանկային գործարքներ,

միջբանկային փոխարկման գործարքներ - ինտեգրված արժույթային շուկայում ռեզիդենտ բանկերի կողմից իրականացվող՝ արտարժույթի առուվաճառքի գործարքներ,

իրավասու մարմիններ - Կողմերի կենտրոնական (ազգային) բանկեր և այլ պետական մարմիններ, որոնք իրականացնում են արժույթային կարգավորում և բանկային վերահսկողություն՝ Կողմերի ազգային օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 2

Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմերի ռեզիդենտ բանկերին, որոնք, իրենց հաստատության պետության օրենսդրությանը համապատասխան, իրավունք ունեն իրականացնելու արժույթային գործարքներ, ապահովում է մուտք դեպի իրենց ազգային արժույթային շուկա միջբանկային փոխարկման գործարքների իրականացման նպատակով՝ նրանց տրամադրելով ոչ պակաս բարենպաստ պայմաններ, քան տվյալ Կողմի ռեզիդենտ բանկերին տրամադրվածն է:

Հոդված 3

Միջբանկային փոխարկման գործարքների իրականացման ընթացքում հավասար մրցակցային պայմանների ապահովման նպատակով սույն Համաձայնագրի իրականացման համար իրավասու մարմինների գործողությունների համակարգման, ինչպես նաև ինտեգրված արժույթային շուկայի մասնակիցների նկատմամբ Կողմերի օրենսդրության դրույթների և ընդունելի միջազգային փորձի վրա հիմնված պահանջների համաձայնեցման համար պատասխանատու են արժույթային-ֆինանսական ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների փոխգործունեություն իրականացնող ԱՊՀ մարմինները:

Հոդված 4

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի՝ այլ միջազգային պայմանագրերով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները:

Հոդված 5

Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են համապատասխան արձանագրություններով:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման ընթացքում Կողմերի միջև ծագած վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջև՝ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:
Խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով վիճելի հարցերը կարգավորելու անհնարինության դեպքում վեճի Կողմերը շահագրգիռ Կողմերից ցանկացածի նախաձեռնությամբ դիմում են ԱՊՀ Տնտեսական դատարան կամ, փոխադարձ համաձայնությամբ, այլ ընթացակարգի:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի դրույթները տարածվում են միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա ստեղծված և գործող բանկերի վրա, որոնց հիմնադիրները հանդիսանում են սույն Համաձայնագրի մասնակից պետությունները՝ մշտապես տեղակայված լինելով սույն Համաձայնագրի մասնակից պետություններից մեկում:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Համաձայնագիրն ստորագրած Կողմերի՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ գրավոր ծանուցումն ավանդապահի ստանալու օրվանից:
Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի ստանալու օրվանից:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո ցանկացած ԱՊՀ մասնակից պետության միանալու, ինչպես նաև, բոլոր Կողմերի համաձայնությամբ, ցանկացած այլ՝ սույն Համաձայնագրի նպատակները և սկզբունքներն ընդունող պետության համար բաց է՝ ավանդապահին միանալու մասին փաստաթուղթը փոխանցելու ճանապարհով:
ԱՊՀ մասնակից պետության համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի ստանալու օրվանից:
ԱՊՀ մասնակից չհանդիսացող պետության համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Համաձայնագրին միացած կամ այդպիսի միանալու մասին ստորագրելու համաձայնություն տված պետությունների վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի ստանալու օրվանից:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրն ունի սույն Համաձայնագրից դուրս գալու իրավունք՝ իր այդպիսի մտադրության մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին դուրս գալուց ոչ ուշ, քան վեց ամիս առաջ:

Կատարված է Աշգարադ քաղաքում 2012 թվականի դեկտեմբերի 5-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերենով: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը յուրաքանչյուր Կողմի կողարկի դրա հաստատված պատճենը:

**Ադրբեջանի Հանրապետության
կողմից**

**Ռուսաստանի Դաշնության
կողմից**

/ստորագրություն/

**Հայաստանի Հանրապետության
կողմից (վերապահումով)**

/ստորագրություն/

**Տաջիկստանի Հանրապետության
կողմից**

/ստորագրություն/

**Բելառուսի Հանրապետության
կողմից**

/ստորագրություն/

Թուրքմենստանի կողմից

**Ղազախստանի Հանրապետության
կողմից (վերապահումով)**

/ստորագրություն/

**Ուզբեկստանի Հանրապետության
կողմից**

**Ղրղզստանի Հանրապետության
կողմից**

/ստորագրություն/

Ուկրաինայի կողմից

**Մոլդովայի Հանրապետության
կողմից**

**Վ Ե Ր Ա Պ Ա Հ Ո Ւ Մ
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն**

Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ ինտեգրված արժույթային շուկայի կազմակերպման բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի 2-րդ հոդվածին կից

Համաձայնագրի 2-րդ հոդվածով նախատեսված՝ միջբանկային փոխարկման գործարքների իրականացման գործունեության լիցենզավորման, կարգավորման, հսկողության և վերահսկողության բնագավառում պարտավորությունները Հայաստանի Հանրապետության կողմից կկատարվեն ազգային օրենսդրության համաձայն:

**Հայաստանի Հանրապետության
նախագահ՝**

Ս Ե Ր Ժ Ս Ա Ր Գ Ս Յ Ա Ն

Վ Ե Ր Ա Պ Ա Հ Ո Ւ Մ
Ղ ա զ ա խ ս տ ա ն ի Հ ա ն ր ա պ ե տ ո թ յ ա ն

Ա ն կ ա խ պ ե տ ո թ յ ո ն ն եր ի հ ա մ ա գ ո ը ծ ա կ ց ո թ յ ա ն մ ա ս ն ա կ ի ց պ ե տ ո թ յ ո ն ն եր ի՝ ի ն տ ե գ ը վ ա ծ ա ը ժ ո թ ա յ ի ն շ ու կ ա յ ի կ ա զ մ ա կ ե ը պ մ ա ն բ ն ա զ ա վ ա ճ ու մ հ ա մ ա գ ո ը ծ ա կ ց ո թ յ ա ն մ ա ս ի ն հ ա մ ա ձ ա յ ն ա գ ը ի ն կ ի ց

Ղ ա զ ա խ ս տ ա ն ի Հ ա ն ր ա պ ե տ ո թ յ ո ն ը հ ա յ տ ա ը ր ա ը ու մ է, որ ս ու յ ն Հ ա մ ա ձ ա յ ն ա գ ը ի 1-ին հ ող վ ա ծ ու մ ն եր կ ա յ ա ց վ ա ծ և հ ա ջ ո ը ղ ա ը ր ա ը Հ ա մ ա ձ ա յ ն ա գ ը ի 2-րդ հ ող վ ա ծ ու մ օ գ տ ա գ ո ը ծ վ ող « ռ ե զ ի ղ ե ն տ բ ա ն կ » ե գ ը ու յ թ ը Ղ ա զ ա խ ս տ ա ն ի Հ ա ն ր ա պ ե տ ո թ յ ո ն ը հ ա ս կ ա ն ու մ է որ պ ե ս ի ը ր ա վ ա բ ա ն ս ա կ ա ն ա ն ձ՝ հ ա ս տ ա տ վ ա ծ կ ող մ եր ի ց որ ն է մ ե կ ի օ ը ն ս ա ղ ը ո թ յ ա ն հ ա մ ա ձ ա յ ն, որ ն ի ը ր ա վ ու ն թ ու ն ի հ ա տ ու կ թ ու յ լ տ վ ո թ յ ա ն հ ի մ ա ն վ ը ա (լ ի ց ե ն զ ի ա յ ի կ ա մ ա յ լ հ ի մ ք ի) ա յ ղ Կ ող մ ի ի ը ր ա վ ա ս ու մ ա ը մ ն ի կ ող մ ի ց ի ը ր ա կ ա ն ա ց ն ե լ ու բ ա ն կ ա յ ի ն գ ո ը ծ ող ը ո թ յ ո ն ն եր ՝ ի ը օ ը ն ս ա ղ ը ո թ յ ա ն հ ա մ ա ձ ա յ ն ը ն ղ ու ն վ ա ծ բ ա ն կ ի կ ող մ ի ց:

Ղ ա զ ա խ ս տ ա ն ի Հ ա ն ր ա պ ե տ ո թ յ ա ն
ն ա խ ա գ ա հ՝

Ն. Ն Ա Ջ Ա Ր Բ Ա Ե Վ

Հ ա մ ա ձ ա յ ն ա գ ի ը ը Հ ա յ ա ս տ ա ն ի Հ ա ն ր ա պ ե տ ո թ յ ա ն հ ա մ ա ը ու ժ ի մ ե ջ է մ տ ե լ 2017թ. մ ա ը ա ի 3-ին